**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋԱՋՈՒՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջաջուռ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ջաջուռ, հեռ. (0312) 6-00-16

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2016 թվականի N 24-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋԱՋՈՒՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱԿՏՈՐԻ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջաջուռ համայնքի **ավագանին որոշեց.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջաջուռ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող սույն որոշման հավելվածում նշված բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման հողերի գործառնական նշանակության 0.026207 հեկտար հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 27102016-08-0017, տրված ,,27,,հոկտեմբերի 2016 թվական) կառուցապատման նպատակով օտարել աճուրդով:
2.Հաստատել աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինը և պայմանները՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝ Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

2.ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԵՆԳՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՐԱՆՏ

5. ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈԿՐԱՏ ՍՈՒՎԱՐՅԱՆ

15 նոյեմբերի 2016թ.
գ. Ջաջուռ